2010 թվականի հունվար -ապրիլ ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 233.8 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 243 մլրդ դրամ, որոնք ապահովել են ՀՀ կառավարության կողմից առաջին կիսամյակի համար հաստատված ծրագրի համապատասխանաբար 70.5 և 59.1 տոկոսը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 32.2%-ով, ծախսերի գծով՝ 28.4%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 19.6%-ով կամ 38.3 մլրդ դրամով: Ընդ որում, 20.8%-ով (37.6 մլրդ դրամով) ավելացել են հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 17.7%-ով կամ 2.1 մլրդ դրամով՝ այլ եկամուտները: Միևնույն ժամանակ, պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը նվազել են 53.4%-ով կամ 1.3 մլրդ դրամով:

Պետական բյուջեի եկամուտների 93.5%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 6%-ը՝ այլ եկամուտների, 0.5%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 6.1 մլրդ դրամ:

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտներն ու պետական տուրքերը կազմել են շուրջ 182.9 մլրդ դրամ և ապահովել առաջին կիսամյակի ծրագրի 71.4% կատարողական: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված

---

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

եկամուտներն աճել են 21.1%-ով կամ 31.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի և եկամտահարկի աճով:

Հարկային եկամուտների ու պետական տուրքերի 48.2%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 88.2 մլրդ դրամ և 30%-ով կամ 20.4 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից շուրջ 58.3 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 29.9 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից: Ընդ որում, մուտքերի աճ է արձանագրվել և՛ ՀՀ սահմանին հարկումից, և՛ ապրանքների ու ծառայությունների ներքին շրջանառությունից ստացվող մուտքերի գծով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 6.8%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 12.4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 8.9 մլրդ դրամ, որից 3.9 մլրդ դրամ՝ բենզինի և դիզելային վառելիքի, 3.5 մլրդ դրամ՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են ավելի քան 3.5 մլրդ դրամ, որից 1.7 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 17.3%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 31.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 5.9%-ով կամ 1.8 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 22.5 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 12.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 38.4%-ով կամ 6.2 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են ավելի քան 9.8 մլրդ դրամ՝ 20.3%-ով կամ 1.7 մլրդ դրամով գերազանցելով 2009 թվականի նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը:

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսներին բյուջե են մուտքագրվել շուրջ 5.1 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով առաջին կիսամյակի համար ծրագրված մուտքերի 58.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 3.4%-ով կամ 177.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների, ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի և հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման համար գանձվող տուրքերի նվազմամբ:

Գործունեության առանձին տեսակներից գանձված հաստատագրված վճարները հունվար-ապրիլ ամիսների ընթացքում կազմել են շուրջ 7.1 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.9%-ը: Չնայած նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշի համեմատ ընդհանուր առմամբ էական փոփոխություն չի կրել, առանձին աղբյուրներից ստացված մուտքերը դրսևորել են տարբեր վարքագիծ: Մասնավորապես՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զգալի աճ է գրանցվել խաղատների գործունեության կազմակերպման, հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու և դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման համար գանձվող հաստատագրված վճարների գծով: Իսկ անկում արձանագրվել է հիմնականում առևտրի իրականացման վայր կազմակերպելու, առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող՝ խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու և ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության կազմակերպման համար գանձվող հաստատագրված վճարների գծով:

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 2.6 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 72.7%-ով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 3.6 մլրդ դրամ այլ հարկեր: Մասնավորապես՝ 1.1 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 153.7 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 838.2 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 639.7 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 8.9 մլն դրամ՝ արտոնագրային վճարները, 463.9 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 13.5 մլն դրամ՝ ՀՀ հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար պետական բյուջեից իրականացվող վճարումները և 401.8 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն ավելացել է 59.5%-ով կամ 1.3 մլրդ դրամով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 35.8 մլրդ դրամ՝ 72.8%-ով կատարելով կիսամյակային ծրագիրը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 19%-ով կամ 5.7 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 14 մլրդ դրամ և 64.7%-ով ապահովել կիսամյակի ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից շուրջ 4.5 մլրդ դրամը

կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 17.7%-ով կամ 2.1 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 3.6 անգամ կամ 3.5 մլրդ դրամով ավելացել են բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, 3.3 անգամ կամ 612.8 մլն դրամով՝ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները: Միևնույն ժամանակ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները նվազել են 2 մլրդ դրամով կամ 24.4%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2009 թվականի հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.1 մլրդ դրամ էր վճարվել ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից:

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ստացվել են շուրջ 1.2 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ, որոնք մուտքագրվել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 23.3%-ով կատարում:

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 243 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով կիսամյակային ծրագրի 59.1%-ը: Մասնավորապես՝ 223.7 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 19.3 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու ժամանակահատվածում 3.2 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի ծախսերն ավելացել են 11.9%-ով կամ 25.8 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, դրամաշնորհների, պետական պարտքի սպասարկման և նպաստների ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 223.7 մլրդ դրամ՝ 60.4%-ով կատարելով կիսամյակային ծրագիրը: Նախորդ տարվա հունվար-ապրիլ ամիսների համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 8.8%-ով կամ 18.2 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 21 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 1.4 մլրդ դրամը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են կիսամյակային ծրագրի համապատասխանաբար 60.5%-ը և 56.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատավարձի ծախսերն աճել են 6.1%-ով, իսկ սոցիալական ապահովության վճարները 1.7%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը պետական բյուջեից հատկացվել է 41.4 մլրդ դրամ, որը կատարվել է 54.9%-ով և 2.8%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 7.6 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով կիսամյակային ծրագրի 40.2%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 5.3 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 2.4 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 76%-ով կամ շուրջ 3.3 մլրդ դրամով, ընդ որում, աճ է արձանագրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի գծով: Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 5.7 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով կիսամյակային ծրագրի 65.7%-ը և 5.6%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: 28.2 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեի դրամաշնորհային ծախսերը, որից 27.7 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 476.3 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին, 38.6 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների գծով առաջին կիսամյակում տրամադրվել է 10.8 մլրդ դրամ՝ կազմելով առաջին կիսամյակի ծրագրի 66.7%-ը և 17.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Դրամաշնորհների կիսամյակային ծրագիրն

ընդհանուր առմամբ կատարվել է 63.8%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 23.4%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 35.3%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են շուրջ 79 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 64.8%-ը: Մասնավորապես՝ 58.4 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները (65.8%), 20.6 մլրդ դրամ՝ նպաստները (62.2%): 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն ավելացել են 0.6%-ով, իսկ նպաստները՝ 13.4%-ով:

2010 թվականի հունվար-ապրիլ ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 39.3 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 61.4%-ով ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը և 11.5%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են ավելի քան 19.3 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 47.8%-ը՝ նախորդ տարվա 11.7 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ 19.5 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 34%-ով գերազանցելով 2009 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 126.1 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախորդ տարվա 2.9 մլրդ դրամի դիմաց:

2010 թվականի հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 9.3 մլրդ դրամ պակասուրդով՝ առաջին կիսամյակում նախատեսված շուրջ 79.3 մլրդ դրամի և 2009 թվականի նույն ժամանակահատվածի 21.7 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, ներքին աղբյուրներից ներգրավվել է շուրջ 11.0 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակի ծրագրի 12.4%-ը, իսկ արտաքին աղբյուրները կազմել են -1.7 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 19.3%-ը:

Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 4.8 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից (արժեթղթերից) զուտ մուտքերը, որոնք հիմնականում ապահովվել են գանձապետական պարտատոմսերի հաշվին:

Մուրհակների մարման նպատակով առաջին կիսամյակի ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 100%-ով՝ կազմելով 21.7 մլն դրամ: Անցած ժամանակահատվածում դեֆիցիտի ներքին ֆինանսական ակտիվները կազմել են շուրջ 15.8 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակի համար ծրագրվածի 20.8%-ը: Մասնավորապես՝ առաջին կիսամյակում նախատեսված 73.5 մլրդ դրամի փոխարեն պետական բյուջեի ազատ միջոցներից օգտագործվել է ընդամենը 2.6 մլրդ դրամ: 13.4 մլրդ դրամ ստացվել է տրամադրված վարկերի վերադարձից (5.1 անգամ գերազանցելով տարեկան ծրագիրը), որի զգալի մասը վճարվել է «Հայռուսգազարդ» ԲԲԸ-ի կողմից (12.2 մլրդ դրամ):

Անցած ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 201.5 մլն դրամի վարկեր՝ կազմելով առաջին կիսամյակում նախատեսվածի 44.8%-ը: Նշված գումարից 175 մլն դրամն ուղղվել է Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող մասնավոր փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարկային ծրագրին՝ որպես կառավարության համաֆինանսավորում:

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -1.7 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 19.3%-ը: Մասնավորապես՝ անցած ժամանակահատվածում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրամադրվել են շուրջ 15.2 մլրդ դրամի վարկային միջոցներ: Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 3.5 մլրդ դրամ, որից 2.1 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, շուրջ 316.9 մլն դրամ է հատկացվել է ՄԶԳ աջակցությամբ իրականացվող ծրագրի գծով պարտքի մարմանը, 552.9 մլն դրամ է տրամադրվել էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 444.7 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 18.8 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը:

Անցած ժամանակահատվածում 11.7 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 44.8 մլն դրամի վճարում, որը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 590.3 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում 1.1 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված դրամաշնորհային միջոցների մնացորդը: